ՊԱՏՄԱԲԱՆ ԼԵՆԴՐՈՒՇ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՐԽԻՎԻՑ

ՌԻԳԱՅԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]
(շարունակություն)

Պրոլետարներ բոլոր երկրների միացեք ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ /բոլշևիկների/ Կուսակցություն
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
Պ 53-Ա/13
……. 193 թ.
Քաղվածք Կենտկոմի Քաղբյուրոյի ……. 1921 թ. նիստի N 52-ա արձանագրությունից
26. VII.21թ. հարցումով
13. – Ռիգայում ընկ. Իոֆֆեի կողմից նախաստորագրված դաշնակների հետ համաձայնագրի նախագծի մասին Դաշնակների վերաբերյալ Ռիգայում ընկ. Իոֆֆեի և այլոց կողմից ստորագրված համաձայնագրի նախագիծը վճռականորեն մերժել:
2/գ. ԿԿ-ի ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ենթակա է վերադարձման ՀամԿ/Բ/Կ ԿԿ-ի ՀԲ 2-րդ մաս ոչ ուշ, քան 7 օրյա ժամկետում /ԿԿ ՔԲ-ի 5.V.27 թ. որոշում. արձան. N 100, կ. 5/

[1] Սկիզբը տե՛ս Պատմություն և քաղաքականություն. Թիշ2/3/, 2019, էջ 200 – 211:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Նկատի ունենալով Ռ.Կ.Կ.Կ.Կ.-ի և Հայկ. Հեղ. “Դաշնակցություն” կուսակցության Պետ. Մարմնի համաձայնությունը հիմնական սկզբունքային քաղաքական հարցերում և Հայկ. Հեղ. “Դաշնակցություն” կուսակցության պարտավորությունը՝ իր կատարյալ աջակցությունն ու հնարավոր օգնությունը ցույց տալու Հայաստանի Կառավարությանը, Ռ. Կ. Կ. Կ. –ն նպատակ ունենալով Հ.Հ. “Դաշնակցություն” կուս. համար հնարավորություն ստեղծել իր այդ պարտավորությունը իրականացնելու համար, իր վրա միջնորդություն է վերցնում՝ Հայաստանի Կոմունիս-տական Կուսակցության Կենտրոնական Կոմիտեին առաջարկելու, որ նա օրինականացնի Հայ. Հեղ. :”Դաշնակցություն” կուսակցությունը և նրա հետ բանակցությունների մեջ մտնել համատեղ աշխատանքի հարցում:

ՌԻԳԱ. Բիլդերինհոֆ
14-ը հուլիսի 1921 թվականի:

Հայ հեղափոխական “Դաշնակցություն” կուսակցության Գերագույն Մարմնի Պատվիրակության ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական Հեղափ. “Դաշնակցություն” կուսակցության Գեր. Մարմնի պատվիրակները Ռ. Կ. Կ. Կ. Կ. – ի պատվիրակների հետ ունեցած բանակցություններից հետո հայտարարում են, որ հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը և նրա ազատ ու անկախ քաղաքական կացությունը երաշխավորելու նպատակով անհրաժեշտ է.

Անկախ և ինքնուրույն Հայաստանի գոյությունը, որը ուրիշ պետությունների, այդ թվում և Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. –ի հետ ունեցած իր բոլոր հարաբերություններում պահպաներ իր կատարյալ ինքնիշխանությունը:

Այսպես կոչված Թուրքահայաստանի հետ այսպես կոչված Ռուսահայաստանի տարածքային միավորումը, այսինքն՝ նախկինում հայերով բնակեցված թուրքական տարածաշրջանի միացումը առաջինին, որը բավական է Հայաստանի ազատ տնտեսական ու քաղաքական գոյության համար:

Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. – ի նախաձեռնությունն ու աջակցությունը 2-րդ կետում նշված անհրաժեշտության իրագործմանը:

Հայկական հեղափ. “Դաշնակցություն” կուսակցությունը խոստանում է իր լրիվ աջակցությունն ու հնարավոր օգնությունը Հայաստանի կառավարությանը, որը կենսագործում է 1 և 2 կետերում նշված դրույթները, մասնավորապես, Դաշնակցություն կուսակցությունը պարտավորվում է.

ա. Ինչպես իր մոտ՝ հայրենիքում, այնպես էլ այնտեղից դուրս ագիտացիա մղել հայ ժողովրդի շրջանում, նպատակ ունենալով ժողովրդին միավորել Հայաստանի Կառավարության շուրջը, որը կենսագործում է 1և2-րդ կետերում հիշատակված դրույթները:

բ. Ամեն կերպ աջակցել, որ Հայաստանն ստանա Եվրոպական տերությունների օգնությունն ու աջակցությունը Ռ. Ս. Ֆ. Խ. Հ.-ի նախաձեռնությամբ հայկական հարցը վերը նշված իմաստով լուծելու գործում:

գ. Իր կողմից ուժերը ներածին չափ ներգործել Թուրքիայի վրա՝ նպատակ ունենալով ստանալ նրա համաձայնությունը, որպեսզի Ռուսահայաստանին միացվեն վերը նշված իմաստով Թուրքահայաստանի տարածքները:

ՌԻԳԱ, Բիլդերլինգսհոֆ
14 հուլիսի 1921 թվականի

Վ. Փ
Ս. Ի.
Վ. Ն.

ՍՏՈՒԳՎԱԾ Է

Մտիղ N 915 16/VI 1921թ.

Ռիգայից ներկայաց. 286 15/VI 10. 10. գրություն ուղիղ գծով.

Մոսկվա ՌԿԿԿԿ ընկ. Մոլոտովին ԱԳԺԿ-ատ՝ ընկ. Չիչերինին:

Դաշնակցության պատվիրակությունը խնդրում է Ձեզ փոխանցել հետևյալ հեռագիրը. “Հայկ. Հեղափ. “”Դաշնակցություն” կուսակցության գերագույն մարմնի պատվիրակության առաջարկությունները ԿԿՌԿԿ-ին Զանգեզուրի ճակատում զինադադարի հարցի վերաբերյալ: Մենք այսօր ստացել ենք մանրամասն հեռագիր Թեհրանից հուլիսի 11 և 12 թվակիր՝ Զանգեզուրի ռազմաճակատում մոտավորապես երկու շաբաթ սրանից առաջ սկսված ռազմական ընդհարումների մասին: Հեռագրի համաձայն Խորհրդային Հայաստանը երեք կողմից /Զարուխի, Նախիջևանի և Դարալագյազի կողմից/ խոշոր զորամասերով հարձակում է սկսել Զանգեզուրի վրա: Դաժան մարտեր են տեղի ունեցել երկու կողմերի համար էլ մեծաքանակ զոհերով, որի հետևանքով զանգեզուրցիներին հաջողվել է որոշ ճակատներում կանգնեցնել ձեռնարկված հարձակումը: Նկատի ունենալով, որ այն հիմնական հարցում, որը զանգեզուրցիներին դրդել է զենք վերցնել, այն է՝ հայկական հիմնախնդրի ընդունման ու լուծման հարցում հավանաբար միաձայնություն է կայանում ՌԿԿԿԿ-ի և հայ հեղափ. “Դաշնակցություն” կուսակցության միջև, ինչը զգալիորեն հեշտացնում է մեր փոխհարաբերության խնդիրը և հետագա ու անիմաստ արյունահեղությունից խուսափելու համար, մենք երկրորդ անգամ առաջարկում ենք և խնդրում ենք ՌԿԿԿԿ-ին՝ Հայաստանի Ժողկոմխորհի հանդեպ ստանձնել միջնորդության նախաձեռնությունը ռազմական գործողությունները դադարեցնելու համար և դրանով իսկ հնարավոր դարձնել ստեղծված կոնֆլիկտի վերցումը երկու կողմերի համար ընդունելի պայմաններով: Վերոհիշյալ խաղաղ քայլը կմեկնարկի նաև մեր գերագույն մարմինը: Խնդրում ենք մեր առաջարկությունը հաղորդել Մոսկվա և պատասխանը ընկ. Խաֆֆևի միջոցով հեռագրով հաղորդել մեզ: Վ. Փափազյան, Ս. Իսահակյան, Վ. Նավասարդյան 13 հուլիսի 1921թ.: Բիլդերլինգհոֆ: Մենք մեր կողմից ենթադրում ենք, որ հանձայնությունը դաշնակների հետ կարելի է ձեռք բերել և ուստի հետագա արյունահեղությունը Զանգեզուրի ռազմակետում պետք է դադարեցվի: Երեկ ավարտվեցին բանակցությունները: Ընկ. Ընկ. Գաբրիելյանը և Տեր Վահանյանը այսօր մեկնում են և տանում հանգամանալից զեկուցումն ու նյութերը: Արձանագրությունները կուղարկվեն լրացուցիչ: Դաշնակների տեղեկությունների համաձայն, խորհրդային Հայաստանի զորքերը անհաջողություններ են կրում ռազմաճակատում:

N 3/8, 14 հուլիսի 1921թ.” Ի ո Ֆ Ֆ ե: Տեր-Գաբրիելկան, Տեր Վահանյան: Յու. Զ.

16/7 1921

Բոչարովա 16/7 Ս. Վոզդվիժենկո 5

23 Բ ե զ - զ ա ր ո ղ ո վ կ ա. շտապ՝ քաղվերասկողության միջոցով

Մոսկվա. 3 հասցեով. Ռ. Կ. Կ. Կ. , ընկ. Չիչերինին, ընկ. Տեր-Գաբրիելյանին: Զանգեզուրը ամբողջովին ոչնչացվել է. Դաշնակների հետ բանակցություններ վարելը Հայաստանի կոմկուսի Կ. Կ.-ը համարում է աննպատակ ու անգամ վնասակար, առավել ևս, որ դաշնակցություն կուսակցությունը արտասահմանում բոլորովին վարկը ընկված է, իսկ երկրի ներսում նրանք նրանց վերջնականապես կոչնչացնեն: Անհրաժեշտ է շտապ հաղորդել Ռեվել:

Կ. Կ. – քարտուղար Լուկաշին: